# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2024 թվականի N 1048 - Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված՝ քաղ. Երևան, Նոր Նորք, Մոլդովական փողոց 29/1 շենք, Շիրակի փողոց, 2ա շենք (Շիրակի փողոց թիվ 2/32 շենք), Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4-րդ շենք (ճարտարագիտական քոլեջի հանրակացարան), Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, գյուղ Քարագլուխ, 6-րդ փողոց, շենք 4 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, քաղ. Էջմիածին, Մ. Խորենացի 101/1 շենք հասցեներում բնակվող քաղաքացիներին օրենսդրությամբ սահմանված կարգով

նվիրել իրենց կողմից զբաղեցված բնակելի տարածքները՝ համաձայն հավելվածի, համապատասխանաբար սեփականության իրավունքով և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, հողամասը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց և սահմանված կարգի համաձայն նվիրատվությամբ տրամադրվող բնակելի տարածքները որպես առանձին գույքային միավոր առանձնացնելուց (անհրաժեշտության դեպքում) հետո ապահովել սույն որոշման հավելվածում նշված բնակելի տարածքների նվիրատվությունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված հատակագիծը (ցանկում նշված մակերեսների տարբերություններ առաջանալու դեպքում հիմք ընդունել նշված հասցեների՝ սահմանված կարգով գրանցված համապատասխան վկայականի հատակագծի մակերեսը՝ մինչև 3% թույլատրելի շեղումով) հավելվածում նշված բնակիչների կողմից ներկայացվելուց հետո վերջիններիս հետ մեկ տարվա ընթացքում կնքել նվիրատվության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման նվիրառու բնակիչների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հուլիսի 4-ի N 1048 - Ա որոշման

Ց Ա Ն Կ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

| NN ը/կ | Բնակելի տարածքի անվանումը և հասցեն | Բնակիչների ազգանունը, անունը, հայրանունը | Անձնագրային տվյալները | Մակե-րեսը (քառ. մ) | Սկզբնական արժեքը (դրամ) | Սեփականության իրավունքով կամ ընդհանուր սեփականության իրավունքով տրվող | Հողամասը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Քաղ. Երևան, Նոր Նորք, Մոլդովական փողոց 29/1 շենք, բնակարան 811 | Գալստյան Նիկոլայ Արայիկի | AT0326875 տրված՝ 11.12.2019 թ., 005-ի կողմից | 16.8 | 124,353.6 | սեփականության իրավունքով | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով |
| 2. | Երևան, Շիրակի փողոց, 2ա շենք (Շիրակի փողոց թիվ 2/32 շենք), բնակարան 714 | Սարգսյան Աննա Սերյոժայի | AR0501712 տրված՝ 06.11.2017 թ., 003-ի կողմից | 16.8 | 69,451.2 | սեփականության իրավունքով | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4-րդ շենք (ճարտարագիտական քոլեջի հանրակացարան), բնակարան 413 | Բաղալյան Հասմիկ Ավետիսի<br><br>Սարգիսովա Աստղիկ Ցականի | 007274905, տրված՝ 23.09.2015 թ., 019-ի կողմից<br>013819305, տրված՝ 20.04.2022 թ., 019-ի կողմից | 32.5 | 372,263.13 | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով |
| 4. | Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, գյուղ Քարագլուխ, 6-րդ փողոց, շենք 4, բնակարան 3 | Սարգսյան Ռոբերտ Ալբերտի<br><br>Սարգսյան Ռոզա Զոնիկի | AL0261708 տրված՝ 26.05.2023 թ., 037-ի կողմից<br>AL0623171 տրված՝ 10.02.2024 թ., 037-ի կողմից | 67.56 | 1,192,699.5 | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով |
| 5. | Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, քաղ. Էջմիածին, Մ. Խորենացի 101/1 շենք, բն. 310 | Հարությունյան Սյուզաննա Արթուրի | AT0577006 տրված՝ 28.09.2020 թ., 027-ի կողմից | 11.20 | 543,222.4 | սեփականության իրավունքով | ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ